




ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ
ԵՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ
ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ

ISSN 1829-0280

ԲԱՆԲԵՐ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԵՆՏԵՍԱԳԻՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ



ВЕСТНИК

АРМЯНСКОГО ГОСУДАРСТВЕННОГО
ЭКОНОМИЧЕСКОГО УНИВЕРСИТЕТА

MESSENGER


OF ARMENIAN STATE UNIVERSITY OF ECONOMICS

2022 [4]
ԵՐԵՎԱՆ



ԼԻԼԻԹ ՄԿՐՏՉՅԱՆ

ՀՊՏՀ կառավարման ամբիոնի ասպիրանտ

 <https://orcid.org/0000-0003-1824-847X>

ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎԱԾ ԽԱՆՏՈՒՄՆԵՐԻ ԵՎ ԴՐԱՆՑ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ՕՐԻՆԱԿՈՎ

Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից իրենց վերապահված լիազորությունների պատշաճ իրականացումը կարևոր նշանակություն ունի ցանկացած երկրի համար: Այդ է պատճառով, որ պետական իշխանության մարմինները վերահսկողություն են իրականացնում համայնքների կառավարման մարմինների գործունեության նկատմամբ: Հոդվածը նվիրված է իրավական հսկողության արդյունքում բացահայտված խախտումների թվի և ֆինանսական համահարթեցման դոպացիաների ու բնակչության թվի միջև կապի ուսումնասիրությանը: Հետազոտության շրջանակներում հաշվարկվել և համեմատվել են վերը նշված փոփոխականների տարբերակայնությունը, ինչպես նաև կազմվել է գծային ռեգրեսիոն մոդել, որի միջոցով ներկայացվել է ընտրված փոփոխականների միջև կապը: Վերլուծության արդյունքում պարզ է դարձել, որ խախտումների թիվը ուղիղ կախվածության մեջ է բնակչության թվից և հակադարձ կախվածություն ունի համայնքներին տրամադրված դոպացիաների չափից:

Հիմնաբառեր. *իրավական և մասնագիտական հսկողություն, ֆինանսական համահարթեցման դոպացիաներ, հավելածի տեսակ, գծային ռեգրեսիոն մոդել, տեղական ինքնակառավարում*

JEL: H70, R50, R58

DOI: 10.52174/1829-0280_2022.4-62

Ներածություն: Տեղական ինքնակառավարման համակարգի ձևավորման հիմնական նպատակներից մեկը համայնքի բնակիչներին հանրային ծառայությունների առավել արդյունավետ մատուցումն ապահովելն է: Այս տեսանկ-

յունից կարևորվում է նաև պետական աջակցությունը և մասնակցությունը վերը նշված գործընթացին: Դա դրսևորվում է պետական բյուջեից համայնքների բյուջեներին ֆինանսական միջոցների հատկացմամբ և տեղական ինքնակառավարման մարմիններին (այսուհետ՝ ՏԻՄ) վերապահված լիազորությունների կատարման նկատմամբ հսկողության կազմակերպմամբ:

Ներկայումս, երբ ՀՀ-ում շարունակվում են վարչատարածքային բարեփոխումները, արդիական է դառնում ՏԻՄ-ի և տարածքային կառավարման մարմինների միջև հարաբերությունների ուսումնասիրությունը նոր ձևավորված պայմաններում: Այդ նպատակով ուսումնասիրվել է վերջիններիս միջև առկա փոխհարաբերություններից մեկը՝ հսկողությունը:

Վերջին տարիներին էականորեն կրճատվել է համայնքների թիվը: Ձևավորվել են ավելի մեծ համայնքներ՝ ավելի շատ բնակչությամբ և միջոցներով: Այսպիսի պայմաններում հետաքրքրական է՝ արդյոք համայնքների կառավարման մարմինների կողմից թույլ տրվող խախտումները նվազել են, թե ոչ, և ինչ գործոններ են ազդել խախտումների թվի փոփոխության վրա:

ՏԻՄ-ի կողմից իրենց լիազորությունների կատարման ընթացքում թույլ տրված խախտումների թիվը կախված է մի շարք գործոններից: Հետազոտության շրջանակներում նպատակ է դրվել ուսումնասիրելու այդ գործոնների ազդեցությունը իրավական հսկողության արդյունքում բացահայտված խախտումների թվի վրա:

Գրականության ակնարկ: Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի՝ ՏԻՄ-ի գործունեության նկատմամբ կատարվում է իրավական և մասնագիտական հսկողություն, որը համապատասխան լիազոր մարմինները կարող են իրականացնել անմիջականորեն կամ մարզպետների միջոցով: Որպես կանոն, այդ հսկողությունն իրականացվում է հենց մարզպետների կողմից, որը ՀՀ տարածքային կառավարման մարմինների հիմնական գործառույթներից է¹:

Ֆինանսական համահարթեցման նպատակը համայնքների ներդաշնակ զարգացմանը նպաստելն է, ինչպես նաև բոլոր համայնքներում նվազագույն մակարդակի ծախսեր կատարելու հնարավորություն ստեղծումը տեղական ինքնակառավարման մարմիններին օրենքով վերապահված սեփական լիազորությունների իրականացման համար համայնքների ֆինանսական հնարավորությունների միջև առկա տարբերությունների նվազեցմամբ²: Այսպիսով՝ ֆինանսական համահարթեցումը թույլ է տալիս ՏԻՄ-ին իրենց համայնքի բնակիչներին տրամադրել միանման հանրային ծառայություններ՝ նույնանման հարկային բեռի պայմաններում³:

¹ Տե՛ս **Mkrtchyan Lilit**, COMPARATIVE ANALYSIS OF TERRITORIAL GOVERNANCE AND LOCAL SELF-GOVERNMENT SYSTEMS OF THE RA AND EU COUNTRIES, ALTERNATIVE Quarterly Academic Journal Economy & Management January - March, 2022, էջ 232, <http://alternative.am/wp-content/uploads/2022/04/Lilit-MKRTCHYAN-Comparative-analysis-of-territorial-governance-and-local-self-government-systems-of-the-RA-and-EU-countries.pdf>

² Տե՛ս ՀՀ օրենքը «Ֆինանսական համահարթեցման մասին», հոդված 2, 20.10.2016, <https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118597>

³ Տե՛ս **Blöchliger H., Merk O., Charbit C., Mizell L.**, FISCAL EQUALISATION IN OECD COUNTRIES, OECD Working Papers on Fiscal Federalism No. 4, 2007, էջ 5, <https://www.oecd-ilibrary.org/docserver/5k97b11n2gxx-en.pdf?expires=1652213602&id=&accname=guest&checksum=D37DAF18D2E061A4A5B421429507C47D>

Հետազոտության թեմային առնչվող հայրենական գրականության մեջ հիմնականում քննարկվում են ՏԻՄ-ի և պետական կառավարման մարմինների միջև փոխհարաբերությունների հիմնական ուղղությունները, ինչպես նաև դրանցում առկա խնդիրները:

«Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում» աշխատության հեղինակները հիմնականում շեշտը դրել են նշված մարմինների միջև ֆինանսական փոխհարաբերությունների վրա՝ քննարկելով այդ ոլորտում առկա հիմնախնդիրները: Աշխատությունում խոսվում է նաև հսկողական փոխհարաբերությունների մասին՝ ներկայացնելով հսկողության կազմակերպման օրենսդրական հիմքերը⁴:

«Սկանդինավյան համայնքների վերահսկողությունը» հոդվածում մանրամասն ներկայացվում են նշված երկրների տեղական ինքնակառավարման համակարգերը և դրանց հսկողության օրենսդրական հիմքերը, ինչպես նաև հսկողության կազմակերպման ընթացակարգերը: Առանձին խոսվում է նաև մունիցիպալ բողոքարկման ինստիտուտի մասին, որը թույլ է տալիս իրականացնել քաղաքացիական վերահսկողություն տեղական ինքնակառավարման մարմինների որոշումների նկատմամբ: Հսկողության այս ձևը բնորոշ է Նորվեգիային և Ֆինլանդիային⁵:

Այսպիսով՝ հայրենական և արտասահմանյան գրականության մեջ քննարկվում են համայնքների հսկողության մեխանիզմներն ու ձևերը: Սույն հետազոտության շրջանակներում կքննարկենք այն գործոնները, որոնք ազդում են ՀՀ-ում ՏԻՄ-ի կողմից թույլ տրված խախտումների թվի վրա:

Հետազոտության մեթոդաբանություն: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ՀՀ համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների (DOT) և մարզերի բնակիչների (POP) թվի ազդեցությունը համայնքներում իրականացվող իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների թվի (NOV) վրա: Տվյալները հավաքագրվել և ներկայացվել են՝ հիմնվելով յուրաքանչյուր փոփոխականի գծով տարեկան աճի տեմպի հաշվարկի վրա՝ ըստ 2016–2020 թթ. ՀՀ բոլոր մարզերի: Նշված փոփոխականների միջև կապը գնահատելու համար մշակվել է գծային ռեգրեսիայի մոդել՝ կիրառելով տվյալների վերլուծության Eviews փաթեթը:

Հետազոտության իրականացման շրջանակներում կիրառվել են վիճակագրական վերլուծության, համեմատության, ինդուկցիայի և այլ մեթոդներ:

Վիճակագրական վերլուծության մեթոդով հավաքագրվել են 2015–2020 թթ. ՀՀ մարզերի բնակչության տվյալները, համայնքներում կազմակերպված իրավական հսկողության արդյունքում բացահայտված խախտումները, ինչպես նաև համայնքներին տրամադրված ֆինանսական համահարթեցման դոտացիաները:

Համեմատության մեթոդը թույլ է տվել համադրել նախորդող և նշված տարիների խախտումների և դոտացիաների տարեկան աճի տեմպերը:

⁴ Տե՛ս **Սուվարյան Յու. Մ.** և ուրիշներ, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2014, էջ 104-115, https://asue.am/upload/files/amberd/SUV-5-_Repaired.pdf

⁵ Տե՛ս **Mäkinen Eija**, Controlling Nordic municipalities, European Public Law 23(1), 2017, էջ 123–147, <https://core.ac.uk/download/pdf/287058513.pdf>

Ինդուլցիայի մեթոդի կիրառմամբ հնարավոր է եղել կատարել համապատասխան եզրահանգումներ՝ համադրելով վերը նշված փոփոխականների տարեկան աճի տեմպերը, ինչպես նաև գծային ռեգրեսիայի մոդելի արդյունքները:

Հետազոտության համար որպես տեսական, տեղեկատվական և մեթոդական հիմք է ծառայել թեմային առնչվող հայրենական և արտասահմանյան գրականությունը: Ուսումնասիրության համար անհրաժեշտ տվյալները հավաքագրվել են հետևյալ աղբյուրներից.

- Իրավական հսկողության արդյունքում բացահայտված խախտումները՝ ՀՀ մարզպետարանների պաշտոնական կայքերից:
- Համայնքներին տրամադրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաները՝ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայքից⁶:
- ՀՀ մարզերի բնակիչների թիվը՝ ՀՀ վիճակագրական կոմիտեի պաշտոնական կայքից⁷:

Վերլուծություն: Համաձայն ՀՀ Սահմանադրության՝ համայնքի սեփական խնդիրների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմինն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում է իրավական հսկողություն: Պետության կողմից պատվիրակված լիազորությունների իրականացման նկատմամբ Կառավարության լիազոր մարմիններն օրենքով սահմանված դեպքերում և կարգով իրականացնում են իրավական և մասնագիտական հսկողություն⁸:

Իրավական հսկողությունն իրականացվում է ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի հրամանով հաստատված հարցաշարին համապատասխան, որը ներառում է ՏԻՄ-ի՝ ստուգման ենթակա սեփական լիազորությունները: Հսկողություն իրականացնող սուբյեկտները հարցաշարում նշում են կատարում՝ արդյոք դրույթը պահպանվել է, թերի է պահպանվել, թե չի պահպանվել⁹: Նոր հարցաշարում, ի տարբերություն նախկինում գործողի, հնարավոր է նաև առանձին դաշտով նշել, որ գործառույթն առհասարակ չի իրականացվել: Նախկինում գործառույթի չկատարման դեպքում ստուգում իրականացնող սուբյեկտները կամայականորեն նշում էին կատարում կամ «պահպանված է», կամ «պահպանված չէ» դաշտերում, ինչը թույլ չէր տալիս ապահովել հսկողության արդյունքների միասնականությունը:

⁶ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք, <http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>

⁷ Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021, էջ 40, https://armstat.am/file/article/demog_2021_2_pdf

⁸ ՀՀ Սահմանադրություն, հոդված 188, 05.07.1995 (12.06.2015 փոփոխություններով), <https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>

⁹ Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 09.04.2020 N 03-Ն հրամանը «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին», <https://www.arlis.am/documentView.aspx?docid=141280>

Ստուգումների ավարտից հետո հսկողություն իրականացնող աշխատանքային խմբերը ներկայացնում են արձանագրություններ, որոնցում նշվում են ՏԻՄ-ի կողմից թույլ տրված խախտումները:

ՏԻՄ-ի գործունեության հսկողության հիմնական նպատակն է ապահովել օրինականության և Սահմանադրության սկզբունքների պահպանումը¹⁰: Սակայն ՀՀ համայնքների մեծ մասը հնարավորություն չունի միայն սեփական եկամուտներով ապահովելու իրեն վերապահված լիազորությունների պատշաճ կատարումը:

Կենտրոնական իշխանությունը աջակցում է համայնքներին՝ տրամադրելով բյուջետային հատկացումներ՝ ֆինանսական համահարթեցման դոտացիաներ և սուբվենցիաներ: Համայնքներին տրամադրվող ֆինանսական աջակցությունը հնարավորություն է տալիս ՏԻՄ-ին ավելի արդյունավետ իրականացնել իրենց լիազորությունները:

Ըստ ֆինանսական համահարթեցման սկզբունքների՝ պետական բյուջեից համայնքների բյուջեներին տրամադրվող դոտացիաներն անհատույց են և ոչ նպատակային: Այսինքն՝ դրանք, ի տարբերություն սուբվենցիաների, չեն տրամադրվում կոնկրետ ծրագրերի իրականացման նպատակով, և տեղական ինքնակառավարման մարմիններն իրենք են որոշում, թե որ ուղղություններով ծախսեն ստացված միջոցները:

Հաշվի առնելով վերը նշվածը՝ հետաքրքրական է դառնում այն հարցը, թե արդյոք համայնքների բյուջեներին հատկացվող դոտացիաների ծավալի մեծացմանը զուգահեռ նվազում է ՏԻՄ-ի կողմից իրենց վերապահված լիազորությունների իրականացման ընթացքում թույլ տրված խախտումների թիվը: Այսինքն՝ կա՞րդյոք պատճառահետևանքային կապ այս երկու փոփոխականների միջև, և եթե այո, ապա ինչպիսին է այդ կապը:

Սույն հետազոտության շրջանակներում որպես գրոյական առաջ է քաշվում այն վարկածը, որ իրականում մեր ընտրած փոփոխականների միջև կապ չկա, այսինքն՝ ՏԻՄ-ի կողմից թույլ տրված խախտումների թիվն ամենևին էլ կախված չէ համայնքների բյուջեներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների չափից ու բնակչության թվից:

Վերը նշված վարկածը մերժելու կամ հաստատելու համար հավաքագրվել և համադրվել են մեր ընտրած փոփոխականների վերաբերյալ տվյալները, մասնավորապես՝ ուսումնասիրվել են 2015-2020 թթ. ՀՀ համայնքներում կազմակերպված իրավական հսկողության արդյունքում բացահայտված խախտումները, ամփոփ արդյունքները ներկայացվել են ըստ մարզերի, դիտարկվել է նաև նշված ժամանակահատվածում պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացված ֆինանսական համահարթեցման դոտացիաների չափը և բնակչության թիվը՝ ըստ մարզերի:

Հետազոտության շրջանակներում յուրաքանչյուր տարվա համար որպես համայնքներին տրամադրված դոտացիաների թիվ է դիտարկվել ստուգվող տարվա և դրան նախորդող երկու տարիների դոտացիաների հանրագումարը: Այս մոտեցումը պայմանավորված է այն հանգամանքով, որ, օրինակ, 2015 թ. ՀՀ համայնքներում իրականացվող հսկողության ժամանակ ստուգ-

¹⁰ St'u European Charter of Local Self-Government, Article 8, Strasbourg, 15.10.1985, <https://rm.coe.int/168007a088>

ման են ենթարկվել ընթացիկ, ինչպես նաև դրան նախորդող 2 տարիներին (2013 և 2014 թթ.) ՏԻՄ-ի կողմից ընդունված որոշումները: Ուստի յուրաքանչյուր մարզում 2015 թ. արձանագրված խախտումների թիվն անհրաժեշտ է համեմատել 2013, 2014 և 2015 թվականներին մարզի համայնքներին տրամադրված դոտացիաների հանրագումարի հետ: Նույն մոտեցումը կիրառվել է նաև դիտարկվող բոլոր տարիների համար:

Հետազոտության ընթացքում չեն դիտարկվել 2016 թ. Տավուշի մարզի, 2017 թ. Արմավիրի մարզի, 2018 թ. Արարատի և Վայոց ձորի մարզերի, 2019 թ. Գեղարքունիքի և Տավուշի մարզերի, 2020 թ. Արարատի և Արմավիրի մարզերի տվյալները, քանի որ նշված թվականներին այդ համայնքներում հայտնաբերված խախտումները ներկայացված են մասնակիորեն, և հնարավոր չէ հավաքագրել ամբողջական տվյալները:

Այժմ կատարենք որակական վերլուծություն նշված գործոնների միջև կապը բացահայտելու համար: Որակական վերլուծության նպատակով դիտարկել ենք տվյալ գործոնների տարեկան աճի տեմպերը, ինչը թույլ է տվել հասկանալ դրանց փոփոխությունների միտումները՝ ըստ արդյունքների համադրման:

Տարեկան աճի տեմպերը հաշվարկվել են հետևյալ բանաձևով.

$$T_{\text{տեմպ}} = \frac{T_{\text{ը}} - T_{\text{բ}}}{T_{\text{բ}}} \times 100\%$$

որտեղ՝

- $T_{\text{տեմպ}}$ – փոփոխականի տարեկան աճի տեմպ,
- $T_{\text{ը}}$ – ընթացիկ տարի,
- $T_{\text{բ}}$ – բազիսային տարի:

Ընտրված փոփոխականների գծով տարեկան աճի տեմպերը ներկայացված են աղյուսակ 1-ում.

Աղյուսակ 1

Ֆինանսական համահարթեցման դոտացիաների և իրավական հսկողության արդյունքում բացահայտված խախտումների տարեկան հավելաճի տեմպերը 2016–2020 թթ. (ըստ ՀՀ մարզերի)¹¹

Մարզ	Ֆին. համահարթեցման դոտացիաների տարեկան աճի տեմպերը (%)				Խախտումների տարեկան աճի տեմպերը (%)			
	2017 թ. 2016-ի համ.	2018 թ. 2017-ի համ.	2019 թ. 2018-ի համ.	2020 թ. 2019-ի համ.	2017 թ. 2016-ի համ.	2018 թ. 2017-ի համ.	2019 թ. 2018-ի համ.	2020 թ. 2019-ի համ.
Արագածոտն	4.66	1.04	1.64	7.40	-32.65	42.80	1.33	-65.71
Արարատ	4.79	0.48	0.12	6.06	-45.28	-	-	-
Արմավիր	3.76	0.12	-0.84	5.55	-	-	28.86	-
Գեղարքունիք	4.94	1.77	3.52	7.94	-32.53	4.38	-	-
Լոռի	3.03	-0.11	2.44	11.46	-10.12	-73.86	119.93	-40.61
Կոտայք	5.87	2.76	1.45	9.10	-9.50	-25.79	-11.21	-33.22
Շիրակ	2.18	-0.23	2.21	9.65	-35.25	-44.59	15.16	-21.77
Սյունիք	6.76	2.65	10.04	17.17	-50.40	61.83	-72.09	247.62
Վայոց ձոր	4.97	3.33	3.20	9.17	-7.62	-	-	-46.67
Տավուշ	6.27	3.85	6.45	8.71	-	57.95	-	-

¹¹ Աղյուսակը կազմել է հեղինակը:

Ինչպես երևում է աղյուսակ 1-ից, 2017 թ., 2016 թ. համեմատությամբ, դոտացիաների թիվն ունեցել է աճի միտում ՀՀ բոլոր մարզերի առումով: Խախտումների տարեկան աճի տեմպը նվազել է (վերլուծությունից դուրս են մնացել Արմավիրի և Տավուշի մարզերը՝ նախորդիվ նշված պատճառով):

2018 թ., 2017 թ. համեմատությամբ, տրամադրվող դոտացիաների թիվն աճել է ՀՀ բոլոր մարզերում՝ բացառությամբ Լոռու և Շիրակի մարզերի, որտեղ նվազել է: Խախտումների տարեկան աճի տեմպը նվազել է Լոռու, Շիրակի և Կոտայքի մարզերում, աճել՝ Արագածոտնի, Գեղարքունիքի, Սյունիքի և Տավուշի մարզերում (վերլուծությունից դուրս են մնացել Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերը):

2019 թ., 2018 թ. համեմատությամբ, դոտացիաներն ունեցել են աճի միտում ՀՀ բոլոր մարզերում՝ բացառությամբ Արմավիրի մարզի, իսկ խախտումները նվազել են միայն Կոտայքի և Սյունիքի մարզերում (վերլուծությունից դուրս են մնացել Արարատի, Արմավիրի և Վայոց ձորի մարզերը):

Ինչ վերաբերում է 2020 թվականին գրանցված փոփոխություններին, ապա այս դեպքում դոտացիաներն աճել են բոլոր մարզերում, իսկ խախտումները՝ միայն Սյունիքի մարզում:

Այսպիսով՝ հաշվի առնելով դիտարկվող ժամանակահատվածի համար ընտրված փոփոխականների տարեկան աճի տեմպերը, ընդհանուր առմամբ, դոտացիաների աճն ուղեկցվել է խախտումների նվազմամբ դիտարկվող 27 դեպքից 16-ում, իսկ նվազումը՝ խախտումների աճով՝ 1-ում կամ, որ նույնն է՝ 63% դեպքերում:

Որակական հետազոտության արդյունքները ամրապնդելու համար վերոնշյալ փոփոխականների միջև կապը դիտարկել ենք նաև քանակական գնահատման մեթոդով՝ կիրառելով գծային ռեգրեսիոն մոդել: Գծային ռեգրեսիոն մոդելը կազմվել է Eviews վերլուծական փաթեթի միջոցով:

Հետազոտության շրջանակներում որպես կախյալ փոփոխական է ներկայացվում ՀՀ համայնքներում իրականացված իրավական հսկողության արդյունքում հայտնաբերված խախտումների թիվը՝ ըստ մարզերի (NOV): Անկախ փոփոխականներն են մարզերի բնակիչների թիվը (POP) և ՀՀ համայնքներին պետական բյուջեից ֆինանսական համահարթեցման կարգով տրամադրվող դոտացիաները՝ ըստ մարզերի (DOT): Դիտարկվել են դոտացիաների չափի, բնակչության և խախտումների թվի տվյալները՝ 2015-2020 թթ. ընկած ժամանակաշրջանում: Eviews են մուտքագրվել տարածական տվյալներ, իսկ դիտարկումների քանակը կազմել է 52:

Վերը նշված գործոնները Eviews են մուտքագրվել լրգարիթմված՝ ավելի ճշգրիտ և հավաստի արդյունք ապահովելու և չափման տարբերությունները վերացնելու նպատակով:

Աղյուսակ 2

Գծային ռեգրեսիոն մոդելի արդյունքները

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
POP	2.051344	0.516932	3.968303	0.0002
DOT	-1.210330	0.550064	-2.200343	0.0325
C	14.86020	6.304077	2.357237	0.0225

հնչպես տեսնում ենք աղյուսակ 2-ից, անկախ փոփոխականները՝ դոտացիաների և բնակչության թվերը, նշանակալի են 5% նշանակալիության մակարդակում: Մոդելի դետերմինացիայի գործակիցը (R^2) 0,51 է: Դետերմինացիայի գործակցի ցածր արժեքը բացատրվում է այլ գործոնների բացակայությամբ:

Այժմ ներկայացնենք մոդելի հավասարումը.

$$NOV = 2.05POP - 1.21DOT + 14.86 \tag{1}$$

հնչպես երևում է հավասարում (1)-ից, հսկողության արդյունքում բացահայտված խախտումների և բնակչության թվերի միջև կապը դրական է, իսկ խախտումների և տրամադրված դոտացիաների ծավալի միջև կապը՝ բացասական, ինչը նշանակում է, որ դոտացիաների թվի ավելացումը հանգեցնում է խախտումների թվի նվազման, և, հակառակը՝ տրամադրվող դոտացիաների կրճատումը հանգեցնում է խախտումների թվի ավելացման: Անկախ փոփոխականների գործակիցները բացատրվում են հետևյալ կերպ. համայնքի բնակիչների թվի 1 միավոր ավելացման արդյունքում խախտումների թիվն ավելանում է 2.05 անգամ, իսկ դոտացիաների թվի միավոր ավելացումը հանգեցնում է խախտումների թվի 1.21 անգամ նվազման:

Եզրակացություն: Հետազոտության շրջանակներում ուսումնասիրվել է ՏԻՄ-ի կողմից թույլ տրված խախտումների թվի և դրանց վրա ազդող գործոնների՝ համայնքների բնակիչների թվի և պետական բյուջեից համայնքների բյուջեներին հատկացվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների միջև կապի վերլուծություն:

Հետազոտության արդյունքում մերժվել է զրոյական վարկածն այն մասին, որ ՏԻՄ-ի կողմից թույլ տրված խախտումների և համայնքներին տրամադրվող դոտացիաների ու բնակիչների թվերի միջև կապ գոյություն չունի:

Վերլուծության արդյունքում նկատվել է այն միտումը, որ 63% դեպքերում ֆինանսական համահարթեցման դոտացիաների ավելացումը (նվազումը) հանգեցնում է խախտումների թվի նվազման (ավելացման)՝ ըստ 2016-2020 թթ. տվյալների:

Հետազոտության շրջանակներում տվյալների վերլուծության Eviews փաթեթի կիրառմամբ կազմված ռեգրեսիոն մոդելը ցույց է տվել, որ խախտումների թիվը ուղիղ կախվածության մեջ է բնակչության թվից և հակադարձ կախվածություն ունի համայնքներին տրամադրված դոտացիաների չափից՝ ըստ 2015-2020 թթ. տվյալների:

Այսպիսով՝ պարզ է դարձել, որ համայնքների մեծ մասի դեպքում որքան շատ միջոցներ են հատկացվում համայնքներին, և, հետևաբար, որքան մեծ են լինում համայնքի բյուջեի եկամուտները, այնքան տեղական ինքնակառավարման մարմիններն ավելի լավ են իրականացնում օրենքով իրենց վերապահված գործառոյթները, և քիչ են լինում խախտումները: Հետազոտության արդյունքում իրականացված հաջորդ եզրահանգումը հետևյալն է. որքան մեծ է համայնքի բնակչության թիվը, այնքան ավելի շատ են ՏԻՄ-ի խախտումները: Սա կարող է բացատրվել այն հանգամանքով, որ այս դեպքում համայնքի կառավարման մարմինների կողմից իրականացվող լիազորություններն ավելի ընդգրկուն են, ինչի հետևանքով էլ մեծանում է նաև թույլ տրված խախտումների թիվը:

Օգտագործված գրականություն

1. ՀՀ Սահմանադրություն, հոդված 188, 05.07.1995 (12.06.2015 թ. փոփոխություններով),
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=143723>
2. ՀՀ օրենքը ««Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքում փոփոխություն կատարելու մասին», 07.05.2002 (16.12.2016 թ. փոփոխություններով),
<https://www.arlis.am/documentview.aspx?docid=110535>
3. ՀՀ օրենքը «Ֆինանսական համահարթեցման մասին», 20.10.2016,
<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=118597>
4. Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 09.04.2020 թ. N 03-Ն հրամանը «Տեղական ինքնակառավարման մարմինների սեփական լիազորությունների իրականացման նկատմամբ իրավական հսկողության հարցաշարը հաստատելու և ՀՀ փոխվարչապետ, տարածքային կառավարման նախարարի 2014 թվականի մարտի 3-ի N 11-Ն հրամանը ուժը կորցրած ճանաչելու մասին»,
<https://www.arlis.am/documentView.aspx?docid=141280>
5. Հայաստանի ժողովրդագրական ժողովածու, 2021,
https://armstat.am/file/article/demog_2021_2_.pdf
6. Սուվարյան Յու. Մ. և ուրիշներ, Պետական կառավարման և տեղական ինքնակառավարման զարգացման հիմնախնդիրները ՀՀ-ում, Եր., «Տնտեսագետ», 2014,
https://asue.am/upload/files/amberd/SUV-5-_Repaired_.pdf
7. European Charter of Local Self-Government, Strasbourg, 15.10.1985,
<https://rm.coe.int/168007a088>
8. Blöchliger H., Merk O., Charbit C., Mizell L., FISCAL EQUALISATION IN OECD COUNTRIES, OECD Working Papers on Fiscal Federalism No. 4, 2007,
<https://www.oecd-ilibrary.org/docserver/5k97b11n2gxx-en.pdf?expires=1652740288&id=id&accname=guest&checksum=3F84BFC3EC917916BB35BACB24A93905>
9. Mkrtchyan Lilit, COMPARATIVE ANALYSIS OF TERRITORIAL GOVERNANCE AND LOCAL SELF-GOVERNMENT SYSTEMS OF THE RA AND EU COUNTRIES, ALTERNATIVE Quarterly Academic Journal Economy & Management January - March, 2022,
<http://alternative.am/wp-content/uploads/2022/04/Lilit-MKRTCHYAN-Comparative-analysis-of-territorial-governance-and-local-self-government-systems-of-the-RA-and-EU-countries.pdf>
10. Mäkinen Eija, Controlling Nordic municipalities, European Public Law 23(1), 2017,
<https://core.ac.uk/download/pdf/287058513.pdf>
11. ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պաշտոնական կայք,
<http://www.mtad.am/hy/budgetary-incomes/>
12. ՀՀ Արագածոտնի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://aragatsotn.mtad.am/administrativ-control/>
13. ՀՀ Արարատի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://ararat.mtad.am/administrative-control/>

14. ՀՀ Արմավիրի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://armavir.mtad.am/administrative-control/>
15. ՀՀ Գեղարքունիքի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://gegharkunik.mtad.am/administrative-control/>
16. ՀՀ Լոռու մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://lori.mtad.am/results-audit/>
17. ՀՀ Կոտայքի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://kotayk.mtad.am/administrative-control/>
18. ՀՀ Շիրակի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://shirak.mtad.am/administrative-control/>
19. ՀՀ Սյունիքի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://syunik.mtad.am/administrative-control/>
20. ՀՀ Վայոց ձորի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://vdzor.mtad.am/administrative-control/>
21. ՀՀ Տավուշի մարզպետարանի պաշտոնական կայք,
<http://tavush.mtad.am/administrative-control/>

ЛИЛИТ МКРТЧЯН

Аспирант кафедры менеджмента АГЭУ

Анализ нарушений со стороны органов местного самоуправления и факторов, влияющих на них, на примере РА.

Надлежащее осуществление полномочий, возложенных на органы местного самоуправления, имеет важное значение для любой страны. В связи с этим органы государственной власти осуществляют контроль за деятельностью органов местного самоуправления. Статья посвящена исследованию взаимосвязи между количеством нарушений, выявленных в результате юридического контроля, финансового выравнивания субсидий и численностью населения. В рамках исследования были рассчитаны годовые темпы прироста выше перечисленных переменных и разработана модель линейной регрессии, посредством которой была представлена взаимосвязь между выбранными переменными. В результате анализа стало ясно, что количество нарушений находится в прямой зависимости от численности населения и в обратной зависимости от размера субсидий, предоставляемых сообществам.

Ключевые слова: *судебный и профессиональный контроль, дотации финансового выравнивания, темп прироста, модель линейной регрессии, местное самоуправление*

JEL: H70, R50, R58

DOI: 10.52174/1829-0280_2022.4-62

LILIT MKRTCHYAN

PhD Student of the Chair of Management of ASUE

Analysis of the Violations Committed by Local Self-Government Bodies and the Factors Affecting Them by the Example of the RA. – Proper implementation of authority by local governments is crucial for any country. For this reason, state authorities exercise control over the activities of community governing bodies. The paper is devoted to the study of the relationship between the number of violations revealed as a result of legal control, financial equalization subsidies and the number of population. Within the framework of the research, the annual growth rates of the above-mentioned variables were calculated and a linear regression model was developed, through which the relationship between the selected variables was presented. As a result of the analysis, it became clear that the number of violations is directly dependent on the number of the population and inversely dependent on the amount of subsidies provided to the communities.

Keywords: *legal and professional control, financial equalization subsidies, growth rate, linear regression model, local self-government*

JEL: H70, R50, R58

DOI: 10.52174/1829-0280_2022.4-62